ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ռուբինա Պետրոսյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական կարգավորումները առաջին հայացքից տպավորություն են ստեղծում, որ առանց ծնողական խնամքի մնացած (տվյալ դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության ու խնամատարության ներքո գտնվող) երեխաները, կարգավիճակով պայմանավորված, տիրապետում են հատուկ իրավունքների[1], սակայն տվյալ դեպքում խոսքը ոչ թե բոլորովին այլ իրավունքների համալիրի մասին է, որոնք հատուկ են միայն այս կարգավիճակում գտնվող երեխաներին, այլև ավելի շուտ որոշ իրավունքների առանձնահատուկ կերպով իրացման մասին: Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակում գտնվող երեխաները ևս տիրապետում են ներպետական օրենսդրությամբ առհասարակ երեխաներին վերապահված և իրենց բնույթով ոչ նյութական բարիքների առնչությամբ առաջացող[2] անձնական ոչ գույքային իրավունքների համալիրին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքում[3] (այսուհետ՝ Ընտանեկան օրենսգիրք) առանձին հոդվածի շրջանակներում ամրագրված չեն խնամակալության և հոգաբարձության (այսուհետ՝ խնամակալություն) ներքո և խնամատար ընտանիքում գտնվող երեխաների իրավունքները, դրանցով պայմանավորված խնամակալի կամ հոգաբարձուի (այսուհետ՝ խնամակալ), խնամատար ծնողի իրավունքները և դրանց համապատասխանող նրանց պարտականությունները: Այս հարցում ՀՀ օրենսդիրը հավանաբար առաջնորդվել է այն կանխադրույթով, որ երեխաների իրավական կարգավիճակի տարբերությունը չի հանգեցնում իրավունքների ծավալի էական տարբերության՝ կախված այն հանգամանքից՝ խնամք և դաստիարակություն ստանում են փոխարինող, թե կենսաբանական ընտանիքում: Այսպես, Ընտանեկան օրենսգրքի «Հոգեզավակը» վերտառությունը կրող 138-րդ հոդվածի 3-րդ մասում անձնական ոչ գույքային իրավունքների մասով հղում է արված Ընտանեկան օրենսգրքի 42-44–րդ հոդվածներին, որոնցից 42-րդում ամրագրված է երեխայի՝ ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքը: Խնամարկյալի իրավունքների մասին դրույթներ բացակայում են նաև «Խնամակալությունը և հոգաբարձությունը երեխաների նկատմամբ» վերտառությունը կրող 19-րդ գլխում:

---

[1] Իրավաբանական գրականության մեջ խոսվում է անձի հատուկ իրավունքների մասին, որոնք անձի մյուս սուբյեկտիվ իրավունքների շարքում առանձնանում են իրենց բնույթով, հատկանիշներով: Այս մասին առավել մանրամասն Տե՛ս **Матузов Н. И.,** Правовая система и личность.- Саратов: Изд-во Саратов. Ун-та, 1987, էջ 94:

[2] Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. Երրորդ հրատարակություն – Երևանի պետ. համալս.-Եր.: Երևանի համալս. հրատ, 2006, էջ 242: Гражданское право. Ч. 1 (Под ред. Ю. К. Толстого, А. П. Сергеева), М., ТЕИЦ, 1996, էջ 270-272:

[3] ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդվ. 60:

Իրավաբանական գրականության մեջ երեխայի և օրինական ներկայացուցչի միջև առաջացող անձնական ոչ գույքային իրավունքների դասակարգումներում մշտապես առանձնացվում է երեխայի՝ ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքը՝ հաճախ վերջինիս իրացումով պայմանավորելով այլ իրավունքների պատշաճ իրացումը: Այսպես, Լ. Մ. Պչելինցևան երեխայի հինգ անձնական ոչ գույքային իրավունքների շարքում նշում է **ծնողների, տատիկների, պապիկների, քույրերի, եղբայրների և այլ հարազատների հետ շփվելու իրավունքը**[1]: Յու. Ֆ. Բեսպալովը երեխայի «բարեհաջող զարգացումն ապահովող» անձնական ոչ գույքային իրավունքների խմբում ընդգրկում է «շփման իրավունքը», որը ներառում է օրենքով ապահովված մի քանի հնարավորություններ՝ ծնողների հետ երեխայի մշտական կամ պարբերական շփում, ինչպես նաև նրանցից կամ այլ հարազատներից շփման պարտականության կատարում պահանջելու, շփման իրավունքի պաշտպանության պահանջով իրավասու մարմիններին դիմելու հնարավորություն[2]: Ահա, Ն. Ն. Տարուսինան ծնողի և երեխայի անմիջական շփումը համարում է երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրացման միջոց[3]: Համաձայնելով արտահայտված տեսակետների հետ՝ կարող ենք ասել, որ խնամարկյալի և հոգեզավակի ընտանեկան դաստիարակության իրավունքի լիարժեք իրացումը պայմանավորված է նաև ծնողների և այլ հարազատների հետ երեխայի շփվելու իրավունքի իրացումից: Այն խնամարկյալի, հոգեզավակի դաստիարակության գործընթացի կարևոր բաղադրիչներից է, եթե, իհարկե, ծնողները զրկված չեն ծնողական իրավունքներից, կամ վերջիններիս ծնողական իրավունքները սահմանափակված չեն, իսկ ծնողների և այլ հարազատների հետ շփումը չի հակասում երեխայի շահերին:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան[4] անդամ պետություններին պարտավորեցնում է հարգել ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխայի իրավունքը՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին (9-րդ հոդվ., 3-րդ մաս): Սա պայմանավորված է նաև նրանով, որ, ի տարբերություն որդեգրվածների, խնամարկյալները, հոգեզավակներն իրենց արյունակից ազգականների, իսկ երբեմն նաև ծնողների նկատմամբ չեն կորցնում անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները: Նույն տրամաբանությամբ Ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է երեխայի՝ իր ծնողների, պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ շփվելու իրավունքը, իսկ 56-րդ հոդվածում ամրագրված է պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ ազգականների՝ երեխայի հետ շփվելու իրավունքը: Այդուհանդերձ, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը, նրանց խնամքի և դաստիարակության կազ-

---

[1] Տե՛ս **Пчелинцева Л. М.**, Семейное право России. 6-е изд., М.: Норма, 2009, էջ 291–317:

[2] Տե՛ս **Беспалов Ю. Ф.** Теоретические и практические проблемы реализации семейных прав ребенка в Российской Федерации: автореф. дис.. д-ра юрид. наук., Саратов, 2002, էջ 36–37:

[3] Ն. Ն. Տարուսինան երեխայի անձնական ոչ գույքային իրավունքների շարքում նշում է անհատակության ձեռքբերման և պահպանության իրավունքը, իր ծնողներին ճանաչելու իրավունքը, ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը, որն ամենից առաջ իրացվում է ծնողի և երեխայի անմիջական շփման միջոցով, այլ հարազատների հետ շփվելու իրավունքը, իր կարծիքն արտահայտելու իրավունքը, դատարանում իր սուբյեկտիվ իրավունքներն ու շահերը պաշտպանելու իրավունքը, ամուսնանալու իրավունքը: Այս մասին տե՛ս **Тарусина Н. Н.,** Гражданское право: учебник. Т. 3, гл. 63: Личные и имущественные правоотношения между родителями и детьми /под ред. А. П. Сергеева, М.: ТК Велби, 2009., էջ 467–472:

[4] ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան ընդունվել է 20.11.1989 թ., ուժի մեջ է մտել 22.07.1993 թ.: ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:

մակերպումը» վերտառությունը կրող Ընտանեկան օրենսգրքի 17-րդ գլխի 111-րդ - հոդվածի 1.2-րդ մասում կրկնակի շեշտվել է խնամարկյալի և հոգեզավակի այս իրավունքը, մասնավորապես նշված է. ***«Խնամակալության (հոգաբարձության) կամ խնամատարության միջոցով, խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու ընթացքում պետք է ապահովված լինեն երեխայի ու նրա ծնողի և մերձավոր ազգականների շփումն ու կապը, բացառությամբ այն դեպքի, երբ այդ շփումը, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին»:*** Թեև ՀՀ օրենսդիրն ընդգծել և իր հատուկ վերաբերմունքն է արտահայտել ծնողական խնամքից և հոգատարությունից զրկված երեխաների պարագայում այս իրավունքի ունեցած առանձնակի կարևորության, նշանակության նկատմամբ, այդուհանդերձ Ընտանեկան օրենսգրքում բացակայում է այս առթիվ խնամակալի, խնամատար ծնողի պարտականությունների, դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վրա հասնող հնարավոր սանկցիաների (խնամակալի պարտականությունների կատարումից հեռացում, խնամատարության պայմանագրի լուծում և այլն) վերաբերյալ որևէ դրույթ: Բացի այդ, վկայակոչված հոդվածում առկա «***բացառությամբ այն դեպքի, երբ այդ շփումը, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին»*** դրույթը, գործնականում այս իրավունքի իրացման հարցում առաջընթաց քայլ չի կարելի համարել, քանի որ հազիվ թե խնամակալը, խնամատար ծնողը այս խնդրով դատարան դիմի՝ հաշվի առնելով դատական քաշքշուքները, դատարանների ծանրաբեռնվածությունը, իսկ ծնողը, բնականաբար, իր հետ երեխայի շփումը վերջինիս շահերին հակասող ճանաչելու հայցով դատարան չի դիմի: Ուստի այս դրույթը հռչակագրային բնույթ է կրում, և այդ մասին ուղղակի նշում չլինելու դեպքում անգամ հարցը կլուծվեր Ընտանեկան օրենսգրքի կարգավորումների ընդհանուր տրամաբանության մեջ՝ սկզբում խնամակալության և հոգաբարձության մարմին, ապա՝ դատարան դիմելու միջոցով (դիցուք՝ 56-րդ հոդվ., 2-րդ, 3-րդ մասեր, 53-րդ հոդվ., 3-րդ մաս և այլն):

Ընտանեկան օրենսգրքի 138.1-ին հոդվածի 2-րդ մասում ասվում է, որ խնամատար ծնողները հոգեզավակի նկատմամբ ձեռք են բերում խնամակալի իրավունքներ և պարտականություններ: Մինչդեռ Ընտանեկան օրենսգրքի 136-րդ հոդվածի 3-րդ մասն այս առթիվ հղում է անում Քաղաքացիական օրենսգրքին, որի 38-րդ հոդվածի վերտառությունից, այն է՝ «Խնամակալների և հոգաբարձուների պարտականությունները», արդեն իսկ պարզ է, որ դրանում որևէ խոսք չկա վերջիններիս իրավունքների մասին, ինչպես նաև սպառիչ ամրագրված չեն խնամակալի՝ խնամարկյալի նկատմամբ ունեցած բոլոր պարտականությունները: Ուշագրավն այն է, որ Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասում էլ նշված է. ***«...Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում է նաև նրանց դաստիարակելու նպատակով: Դրան համապատասխան, խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտանիքի մասին օրենսգրքով»:*** Այսպիսով, ստեղծվել է օրենսդրական շրջապտույտ, որի ոչ մի օղակում չկա քննարկվող հարցի համակարգային, սպառիչ կարգավորումը: Բացի այդ, ընտանեկան և քաղաքացիական իրավունքների առանցքային տարբերությունը ընտանեկան իրավունքում անձնական ոչ գույքային իրավունքների գերակայությունն է գույքայինի նկատմամբ, դրանց որոշիչ դերակատարումը գույքային իրավունքների առաջացման, փոփոխման, դադարման, բովանդակության ուրվագծման հարցում: Հետևաբար, խնամարկյալի, հոգեզավակի իրավական կարգավիճակով պայմանավորված՝ խնամակալի, խնամատար ծնողի իրավունքներն ու պարտականությունները պետք է հստակ կարգավորվեն ամենից առաջ ընտանեկան օրենսդրության, այլ ոչ թե խնամակալության մասին Քաղաքացիական օրենսգրքի նորմերով, որոնք այս հարցում կարող են միայն օժանդակ դեր ունենալ՝ բացառելով անցանկալի թափանցումը ընտանեկան իրավահարաբերությունների նուրբ բնագավառ, որտեղ պետք է գե-

ռակշռեն անձնական ոչ գույքային հարաբերությունները: ***Ուստի, Ընտանեկան օրենսգրքում անհրաժեշտ է լրացնել «Խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքներն ու պարտականությունները» վերտառությամբ նոր հոդված:***

Քննարկվող հարցի վերաբերյալ այլ երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը հանգում է հետևյալին. Ռուսաստանի Դաշնության ընտանեկան օրենսգրքում հստակ ամրագրված է խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունը՝ չխոչընդոտելու ծնողների կամ այլ ազգականների հետ երեխայի շփմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման շփումը չի համապատասխանում երեխայի շահերին (ՌԴ ընտանեկան օրենսգրքի 148.1-ին հոդվ., 5-րդ մաս)[1]: Շվեդիայի ընտանեկան օրենսդրությամբ ամրագրված է, որ հոգաբարձուն[2] պետք է ապահովի երեխայի՝ ծնողների և նրա հետ առանձնակի մտերիմ ցանկացած անձի հետ շփվելու իրավունքի իրացումը[3]: ԱՄՆ Լուիզիանա նահանգի «Երեխաների մասին» օրենքի *«Կենսաբանական հարազատների հետ շփման շարունակումը»* վերնագրով 1037.1-ին հոդվածում նշված է. «...խնամակալ նշանակելուց հետո դատարանը կարող է ծնողների, եղբայրների, քույրերի և կենսաբանական այլ հարազատների հետ շփումը շարունակելու որոշում կայացնել: Դատարանը նման որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, երբ համապատասխան փաստերի հիման վրա գտնում է, որ դա բխում է երեխայի լավագույն շահերից»: Այնուհետև նշվում է, որ շփումը շարունակելու մասին որոշումն ուժը պահպանում է մինչև օրենքով սահմանված կարգով դրա փոփոխումը կամ որդեգրման մասին վերջնական որոշման կայացումը[4]: Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում[5] երեխայի շփման իրավունքի առնչությամբ 1631-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է. «Երեխայի խնամքը ներառում է նաև երեխայի շփման շրջանակի որոշումը՝ ի շահ կամ հակառակ երրորդ անձանց շահերի»: Այնուհետև 3-րդ մասում սահմանված է, որ. «…վեճի դեպքում խնամակալի դիմումի հիման վրա որոշում կայացնում է ընտանեկան գործերով դատարանը»[6]: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը չի հստակեցրել՝ հատկապես ովքեր ունեն երեխայի հետ շփվելու իրավունք, ավելին՝ բացահայտված չէ «3-րդ անձանց» շրջանակը, իսկ քանի որ խնամքի իրականացման իրավունքն ու պարտականութ-

---

[1] ՌԴ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է 08.12.1995 թ., ուժի մեջ է մտել 25.12.1995 թ.: Աղբյուրը՝ http://www.consultant.ru

[2] Շվեդիայի «Ծնողների և երեխաների մասին» օրենքում խնամակալն ու հոգաբարձուն տարբերվում են ըստ երեխայի նկատմամբ ունենցած պարտականությունների բնույթի: Հոգաբարձուն ըստ էության կրում է երեխայի անձնական իրավունքների իրացման ապահովման պարտականություն՝ խնամքի և դաստիարակության, կրթության, տարբեր հարցերում օժանդակության, բնակության վայրի որոշման: Խնամակալին վերապահված է երեխայի սեփականության կառավարման և նրան ֆինանսական գործընթացներում ներկայացնելու պարտականություն:

[3] European Family law in action, Volume III: Parental Responsibilities, Edited by **KATHARINA BOELE-WOELKI, BENTE BRAAT, IAN CURRY-SUMMER**, Intersentia, Antwerp-Oxford, 2005 էջ 16:

[4] Տե՛ս Louisiana Children's code: Louisiana State Legislature - Legislative Law: Updated through the 2018 Third Extraordinary Session: http://www.legis.la.gov/legis/Law.aspx?d=72570&fbclid=IwAR1J2OBMby6__vEO6KoCXqhWG3xK8fh4ChNqK0EIWB4yI8_N5e4hJNX0j_4

[5] Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 1800-րդ հոդվածը խնամարկյալի մասին հոգ տանելու խնամակալի իրավունքների և պարտականությունների մասով կիրառելի է համարում այդ առթիվ ծնողների իրավունքների և պարտականությունների (1631-1633-րդ հոդվածներ) վերաբերյալ հոդվածերի կիրառությունը: Այս հոդվածներից յուրաքանչյուրը վերաբերում է երեխայի առանձին անձնական ոչ գույքային իրավունքներին (օրինակ՝ երեխայի խնամքի բովանդակությանը և սահմաններին, կրթությանն ու մասնագիտությանը, երեխայի շփման շրջանակի որոշմանը և այլն):

[6] Տե՛ս Гражданское уложение Германии, 2-е издание, дополненное, Москва, Волтерс Клувер, 2006, էջ 423:

յունը վերապահված են խնամակալին, հետևաբար խնամքի բաղադրիչ հանդիսացող «շփման շրջանակը» ևս որոշում է խնամակալը, իսկ այս իրավունքի իրացմանը կամ դրա սահմանափակմանը վերաբերող հարցերով միայն խնամակալին դատարան դիմելու իրավունքի վերապահումը խտրական մոտեցում պետք է համարել: Ամփոփելով պետք է արձանագրել, որ վերջին երկու երկրների պարագայում ըստ էության ինքնին երեխային պատկանող այս իրավունքի իրացման հարցի վճռումը առաջին դեպքում վերապահված է միայն դատարանին, երկրորդ դեպքում՝ խնամակալին և դատարանին, ինչը ոչ միշտ կարող է բխել երեխայի շահերից: Առավել հաջողված պետք է համարել ՌԴ-ում և Շվեդիայում ամրագրված կարգավորումը, երբ հստակ սահմանված են խնամակալության և հոգաբարձության ներքո գտնվող երեխայի՝ ծնողների և այլ մերձավոր անձանց հետ շփվելու իրավունքը և դրա իրացումը չխոչընդոտելու խնամակալի, հոգաբարձուի պարտականությունը՝ այդպիսով չբացառելով նաև վեճի դեպքում դատարան դիմելու հնարավորությունը:

Խնամարկյալների, հոգեզավակների՝ ծնողների և այլ ազգականների հետ շփման անհրաժեշտությունը բարձրաձայնում և այն ուշադրության կենտրոնում են պահում խնամակալներին, խնամատար ընտանիքներին օժանդակող, այդտեղ գտնվող երեխաների հետ տարբեր աշխատանքներ տանող հոգեբանները և այլ մասնագետներ[1]: Օրինակ, եվրոպական երկրների մեծամասնության և ԱՄՆ-ի սոցիալական ծառայությունների առաջնային խնդիրը ընտանիքի հետ երեխայի վերամիավորումն է, այդ իսկ պատճառով սոցիալական ծառայության գործակալություններն առաջարկում են երեխաներին հոգեբանական օգնության ծառայությունների և ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման լայն շրջանակ: Երեխաների, ծնողների, ինչու ոչ, հարազատների հետ հետևողական, նպատակային աշխատանքների կատարումը կարող է նպաստել երեխայի կենսաբանական ընտանիք վերադառնալուն:

Փաստորեն, ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքի իրացումը ենթադրում է երեխայի հետ պարբերական, կանոնավոր հանդիպումներ, որը կարող է ներառել զրույցներ, տարբեր վայրեր այցելություններ, ինչ-ինչ հարցերում օժանդակություններ: Իրականում խնամակալի, խնամատար ծնողի կողմից ծնողների հետ երեխայի շփման նկատմամբ կարող է ստեղծվել ոչ այնքան դրական և բացառված չէ, ակնհայտ բացասական վերաբերմունք: Պատճառները տարբեր կարող են լինել: Մի դեպքում այդ շփումն ինքնին կարող է առաջացնել որոշակի խնդիրներ, քանի որ երեխաները ծնողների մի զույգի արժեքներից և պահանջներից պետք է անցում կատարեն մյուսի սովորույթներին, մյուս դեպքում՝ չնայած երեխայի՝ խնամակալության, խնամատարության ներքո գտնվելուն, կարող է առաջանալ երեխային դաստիարակելու իրավունքի երկու իրավատերերի փաստացի առկայություն, որը ծնողական իրավունքներից չզրկված ծնողների և խնամակալի, խնամատար ծնողի միջև տարակարծությունների դեպքում, իհարկե, կբարդացնի իրավիճակը: Տվյալ դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնի համապատասխան որոշման և խնամատարության պայմանագրի կնքման պահից արդեն խնամարկյալի, հոգեզավակի դաստիարակության և խնամքի հետ կապված տարատեսակ հարցերի լուծման հիմնական ծանրությունն ու ողջ պատասխանատվությունն ընկնում են խնամակալի, խնամատար ծնողի վրա, որով պայմանավորված էլ ծնողների և այլ ազգականների հետ երեխայի շփման նկատմամբ կարող է ստեղծվել բացասական վերաբերմունք:

---

[1] Այս մասին տե՛ս, օրինակ, **Соломатина Г. Н.,** Приемные дети: Как справиться с проблемами адаптации и воспитания в замещающей семье. Пособие. М.: Гуманитарный изд. центр «ВЛАДОС», 2013: Семейное устройство в России: пособие /Под ред. Л. Сандановой., Благотворительный фонд Е. и Г. Тимченко., М.: ООО «РПФ НИК», 2014:

Հատկանշական է, որ Ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածում ամրագրված՝ ***«ծնողի և այլ ազգականների հետ շփվելու երեխայի իրավունքը»*** թեև կրկնակի շեշտվել և ապահովման պարտականությամբ ամրագրվել է 111-րդ հոդվածի 1.2-րդ մասում, սակայն, այդուհանդերձ, 56-րդ հոդվածում օրենսդիրը կարգավորել է միայն ***մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը ծնողների կողմից խոչընդոտելու դեպքը,*** իսկ շփման արգելքները վերացնելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմին, ապա հայցով դատարան դիմելու հնարավորություն ընձեռել ***միայն մերձավոր ազգականներին*** և ***միայն ծնողների կողմից*** այդ իրավունքի իրացումը խոչընդոտելու դեպքում: Եթե նման իրավակարգավորումների պայմաններում խնամակալի, խնամատար ծնողի կողմից հարազատների հետ երեխայի շփումը խոչընդոտելու դեպքում խնդիրը կարող է լուծվել օրենքի անալոգիա կիրառելով (Ընտ. օր., 56-րդ հոդվ.), ապա 111-րդ հոդվածի 1.2-րդ մասում առկա ***«պետք է ապահովված լինեն երեխայի ու նրա ծնողի և մերձավոր ազգականների շփումն ու կապը, բացառությամբ այն դեպքի, երբ այդ շփումը, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին»*** ձևակերպմամբ ուղղակիորեն ամրագրված չէ խնամակալի, խնամատար ծնողի՝ ծնողների հետ երեխայի շփումը չխոչընդոտելու պարտականությունը, որևէ կերպ ապահովված չէ այս իրավունքի իրացումը, բացակայում են իրավունքի իրացումը խոչընդոտելու դեպքում արգելքները վերացնելու մեխանիզմներն ու իրավասու մարմինները՝ արդյունքում առաջացնելով օրենսդրական բաց: Ստացվում է՝ եթե օրենքի անալոգիայի կիրառմամբ ինչ-որ չափով կարգավորված և պաշտպանված է երեխա-ազգականներ փոխադարձ շփման իրավունքը, ապա ծնող-երեխա շփման իրավունքի իրացումը չխոչընդոտելը, դրա համար նպաստավոր պայմաններ ստեղծելը թողնված են խնամակալի, խնամատար ծնողի հայեցողությանը: Առաջնորդվելով Ընտանեկան օրենսգրքում առկա իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությամբ՝ ծնող-երեխա շփվելու իրավունքի իրացումը խոչընդոտելու դեպքում հարցը պետք է լուծվի խնամակալության և հոգաբարձության մարմնի, ապա՝ դատարանի կողմից (Ընտ. օր., 56-րդ հոդվ.): Ինչ վերաբերում է շփման կարգին և պայմաններին վերաբերող հարցերին, ապա դրանց որոշման իրավասությունը խնամակալության, խնամատար ընտանիքի առնչությամբ ՀՀ–ում գործող իրավակարգավորումների տրամաբանության մեջ խնամակալության և հոգաբարձության մարմնին է պատկանում, որի մասին խնամակալության կիրառման դեպքում պետք է նշվեն խնամակալ (հոգաբարձու) նշանակելու մասին որոշման, իսկ խնամատար ընտանիքի դեպքում՝ խնամատարության պայմանագրում: Ինչ վերաբերում է 54-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորմանը, որը վերաբերում է երեխայից առանձին ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու իրավունքին, ապա պետք է նշել, որ սա ուղղված է այն դեպքերի կարգավորմանը, երբ ծնողները ամուսնալուծված են կամ ամուսնալուծված չեն, սակայն առանձին են ապրում, իսկ երեխան պարտադիր գտնվում է ծնողներից մեկի խնամքի և դաստիարակության ներքո, հետևաբար չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ: Երեխան խնամակալության և խնամատարության կարող է հանձնվել նաև ծնողի՝ արտակարգ իրադրության մեջ գտնվելու դեպքերում (դիցուք՝ ճգնաժամային խնամատար ընտանիքի տեսակը կիրառվում է նաև ծնողի (այլ օրինական ներկայացուցչի) արտակարգ իրադրության մեջ գտնվելու դեպքերում՝ կալանավորման, ազատազրկման, տարերային կամ տեխնածին աղետի հետևանքով երեխայի ծնողի (այլ օրինական ներկայացուցչի) համար երեխայի խնամքի ու դաստիարակության իրականացման անհնարինության դեպքերում) (Ընտ. օր., 139-րդ հոդվ., 1-ին մաս, 2-րդ կետ): Վերջին իրավիճակի առնչությամբ պետք է ասել, որ 42-րդ հոդվածի 2-րդ մասում ասված է. ***«...արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնողն իր երեխայի հետ շփվելու իրավունք ունի օրենքով սահմանված կարգով»:*** Այս դեպքում կրկին անալոգիայի կիրառմամբ կարող ենք կարգավորված համարել խնամարկյալ-արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնող, հո-

գեզավակ-արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնող շփումը: Տվյալ դեպքում, սակայն, կրկին բացակայում է այդ իրավունքի իրացումը չխոչընդոտելու խնամակալի, խնամատար ծնողի հանդիպակաց պարտականությունը: Այսպիսով, ըստ էության ստեղծվում է հետևյալ իրավիճակը՝ օրենքի անալոգիայի կիրառմամբ կարգավորված կարելի է համարել խնամակալության, խնամատարության ներքո գտնվող երեխայի և նրա՝ միայն արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնողի և ազգականների հետ շփվելու խնամարկյալի, հոգեզավակի իրավունքը: Այդուհանդերձ, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ունեցող երեխայի՝ առհասարակ ծնողների հետ շփվելու իրավունքը համակարգային իմաստով փաստորեն ամրագրված, դրա իրացումն ապահովված չէ: Իրավամբ, ինչպես առհասարակ բոլոր, այնպես էլ այս իրավահարաբերություններում կարգավորումը պետք է ելնի իրավական որոշակիության սկզբունքից՝ անալոգիայի կիրառությունը հասցնելով նվազագույնի:

Մեկ այլ, ոչ պարզորոշ իրավիճակ է ստեղծվում Ընտանեկան օրենսգրքի 42-րդ և 111. 2-րդ հոդվածներում նշված ***«այլ ազգականներ»*** և ***«մերձավոր ազգականներ»*** հասկացությունների միաժամանակյա, զուգահեռ գործածությամբ: Այսպիսով, հստակ սահմանված չէ երեխայի՝ ազգականների հետ շփման շրջանակը: Եթե այս հարցում առաջնորդվենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի[1] իրավական կոլիզիաների լուծման կանոններով, ըստ որի՝ ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, ապա երեխայի շփման շրջանակը պետք է սահմանափակվի մերձավոր ազգականների հետ շփումով, ինչը, կարծում ենք, ոչ միշտ կարող է համապատասխանել երեխայի շահերին (Օրենքի 40-րդ հոդվ., 1-ին մաս, 2-րդ կետ): *Ուստի, կարծում ենք, ելնելով երեխայի շահերից՝ անհրաժեշտ է վերացնել շփվելու իրավունքի սահմանափակումները՝ այդպիսով ամրագրելով երեխայի և ազգականների շփվելու իրավունքը:*

Սավինն ընդդեմ Ուկրաինայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) ընդգծել է ծնողների և հարազատների հետ խնամատար երեխայի *(հոգեզավակ եզրույթը կիրառվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքում)* շփման կարևորությունը ազգակցական հարաբերությունները պահպանելու և (կամ) վերականգնելու առումով, որքանով «պետությունը (այդ թվում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը) պարտավոր է լուրջ և երկարատև ջանքեր ձեռնարկել, որոնք ուղղված կլինեն ծնողների հետ երեխաների վերամիավորմանը»[2]: Ագեևն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է «ծնողների և երեխաների միջև զգացական կապի պահպանման» կարևորությունը (*ինչը հնարավոր է միայն կանոնավոր շփման պարագայում)* նշելով, որ, անգամ միչև չափահասության տարիքի հասնելը, խնամատար ընտանիքում երեխայի դաստիարակվելու դեպքում ծնողների, տվյալ դեպքում նաև այլ ազգականների հետ շփումը, կապի պահպանումը դրական կանդրադառնան նրա ողջ կյանքի վրա[3]**:**

Օրենսդիրն Ընտանեկան օրենսգրքում ներդրել է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման գաղափարը, որը կարող է կյանքի կոչվել երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման ընթացքում խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ծնողի հետ համագործակցության դեպքում (Ընտ. օր., 111-րդ հոդվ., 2.1-ին մաս): Բոլոր հնարավոր դեպքերում պետք է միջոցներ ձեռնարկել երեխայի հետագա վերադար-

---

[1]«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 21.03.2018 թ., ուժի մեջ է մտել 07.04.2018 թ.: ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

[2] Տե՛ս European Court of Human Rights, Case of **Saviny v. Ukraine**, 18/ 03/ 2009/ App. no. № 39948/06// https://hudoc.echr.coe.int/eng (վերջին մուտք 07. 05. 2018 թ.):

[3] Տե՛ս European Court of Human Rights, Case of **Ageyevy v. Russia,** 18/04/2013, App. No(s). 7075/10// https://hudoc.echr.coe.int/eng (վերջին մուտք 07. 05. 2018 թ.):

ձը ընտանիք ապահովելու համար: Այս միջոցները պետք է ներառեն ծնողների, այդ թվում արդեն ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձանց հետ վերականգնողական աշխատանքների, նրանց անհրաժեշտ օգնության տրամադրման կազմակերպումը՝ հիմքում ունենալով վերամիավորման նպատակ: Այս մոտեցումը համահունչ է Ընտանեկան օրենսգրքում ամրագրված՝ ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնայնության, ինչպես նաև ծնողական իրավունքների վերականգնման կամ ծնողական իրավունքների սահմանափակման վերացման հնարավորության առկայությանը:

Խնամատար ընտանիքի առնչությամբ այլ երկրներում առկա իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինիս նպատակը երեխայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորումն է: Օտարերկրյա պետություններում լայնորեն կիրառվում է ազգակցական կապերի պահպանման և վերականգնման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Օրինակ՝ Իտալիայում խնամատար ընտանիքի կիրառության պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինիս ստեղծման առաջնային նպատակը երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելն է: Դատարանի որոշմամբ անհրաժեշտության դեպքում («անհաջող ընտանիքից» երեխային վերցնելու) երեխան խնամատար ընտանիքում տեղավորվում է ծնողների մասնակցությամբ, ծայրահեղ դեպքում նրանք հստակ տեղեկանում են՝ ինչպիսի ընտանիքում է ապրում երեխան, հնարավորություն են ունենում հանդիպելու նրան[1]: Բրիտանական և ամերիկյան իրավական համակարգերում երեխային խնամատար ընտանիք (foster home) կամ խնամքի համար նախատեսված հաստատություն տեղավորելիս կենսաբանական ընտանիքի հետ կապը պահպանվում է բոլոր հնարավոր դեպքերում[2]:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Ընտանեկան օրենսգրքում ամրագրված կենսաբանական ընտանիքի հետ երեխայի վերամիավորման գաղափարով և երեխայի՝ ծնողների (ովքեր զրկված չեն ծնողական իրավունքներից, կամ որոնց ծնողական իրավունքները սահմանափակված չեն) և այլ ազգականների (պապիկներ, տատիկներ, քույրեր, եղբայրներ և այլն) առկայության դեպքում նրանց հետ շփվելու իրավունքի ապահովման նպատակով, որոնց հետ շփումը չի հակասում երեխայի շահերին, կարծում ենք, որ անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել Ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածի 1.2-րդ մասը, իսկ «Երեխայի խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքներն ու պարտականությունները» վերտառությունը կրող հոդվածում, գտնում ենք, անհրաժեշտ է ամրագրել հետևյալ դրույթը. ***«Խնամակալը կամ հոգաբարձուն պարտավոր է չխոչընդոտել ծնողների կամ այլ ազգականների հետ երեխայի շփումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ շփումը հակասում է երեխայի շահերին»***: Այստեղից էլ հետևում է խնամակալության և հոգաբարձության մարմնին խնամակալ (հոգաբարձու) նշանակելու մասին որոշման, իսկ մարզպետարանին կնքվելիք խնամատարության պայմանագրում խնամարկյալի և ծնողների ու այլ ազգականների հետ շփման կարգն ու պայմանները սահմանելու իրավունք վերապահող դրույթների ամրագրման[3], իսկ ներկայումս շրջանառության մեջ գտնվող «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց հաշվառման,

---

[1] Տե՛ս **Гайсина Г. И.,** Семейное устройство детей-сирот и детей, оставшихся без попечения родителей: российский и зарубежный опыт, Научно-популярное издание, 2013, էջ 132-133:

[2] Տե՛ս Семейное устройство в России: пособие */Под ред. Л. Сандановой*, էջ 111-112:

[3] ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Ուստի խնամակալության և հոգաբարձության մարմնին նման իրավունք վերապահելու համար Ընտանեկան օրենսգրքում պետք է ամրագրվեն համապատասխան լիազորող նորմեր:

որակավորման և երեխայի խնամքն ու դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հաստատվող խնամատարության պայմանագրի օրինակելի ձևում շփման կարգի և պայմանների վերաբերյալ համապատասխան դրույթների լրացման անհրաժեշտությունը:

Միշտ պետք է ելնել այն կանխադրույթից, որ խնամակալությունն ու հոգաբարձությունը և հատկապես խնամատար ընտանիքը (այս մասին Ընտանեկան օրենսգրքում հստակ նշված է) ստեղծվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ժամանակավոր ընտանեկան դաստիարակության համար, այսինքն՝ վերջինիս կենսաբանական ընտանիքի վերականգնման ընթացքի համար: Ուստի պետք է ձեռնարկվեն բոլոր քայլերը, որպեսզի մինչև չափահասության տարիքի հասնելը երեխաների խնամակալության, խնամատար ընտանիքում գտնվելու դեպքերը չդառնան օրինաչափություն և չհամարվեն երեխայի խնամքի և դաստիարակության իրականացման հարցում պետության գրանցած հաջողություն: Մասնագիտացված խնամատար ընտանիքները, ի դեմս խնամատար ծնողների, որոշակի ժամանակահատված բարեխղճորեն կատարելով իրենց պարտականությունները, պատրաստ կլինեն ընդունելու խնամքի և դաստիարակության կարիք ունեցող նոր երեխաների, իսկ երեխայի կենսաբանական ընտանիքի առողջացմանն ու վերականգնմանը էապես կարող է նպաստել երեխա-ծնող շփումը: Հաճախ զուտ սոցիալական պատճառներից դրդված՝ երեխաներին խնամակալության, իսկ առավել հաճախ խնամատար ընտանիք հանձնած ծնողների՝ երեխայի հետ պարբերար շփման ապահովման, այդպիսով սիրո, հոգատարության և պատասխանատվության զգացումները արթուն պահելու միջոցով կմեծանա երեխայի՝ հնարավորինս շուտ ընտանիք վերադառնալու հավանականությունը: Այլապես կարող է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը գերազանցել, օրինակ, խնամատար ընտանիքներում տեղավորելու հնարավորությանը: Մինչդեռ ցավով պետք է արձանագրել, որ մեր երկրի առկա վիճակագրական տվյալները վկայում են խնամատարության կիրառման բավականին նվազ դեպքերի մասին, երեխային խնամատար ընտանիք հանձնելը, այնտեղ երկար, իսկ որ ավելի ցանկալի է, մինչև չափահաս դառնալն ապրելը համարվում են հաջողություն: Այս իրավիճակում, իհարկե, կենսաբանական ընտանիքների զանգվածային առողջացման և վերականգնման գաղափարի առաջադրումն իրատեսական չի լինի, սակայն դրան նպատակաուղղված միջոցներ ձեռնարկելն անհրաժեշտություն է: Մասնավորապես, խնամատար ծնողների դեպքում երեխաների՝ իրենց ծնողների (ազգականների) հետ շփման իրավունքի ապահովման առումով ծնողների (ազգականների) հետ համագործակցության մասին նախնական գիտելիքներ, կարծում ենք, խնամատար ծնողները պետք է ստանան վերը վկայակոչված Նախագծով նախատեսվող համապատասխան նախապատրաստական, վերապատրաստման դասընթացների ժամանակ:

Այս համատեքստում կարևոր է նաև քույրերի ու եղբայրների՝ տարբեր անձանց խնամակալությանը, տարբեր խնամատար ընտանիքներում տեղավորման դեպքում միմյանց, ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքի ապահովման հարցը: Այս առթիվ ՄԻԵԴ-ը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվեցիայի 8-րդ հոդվածի խախտում է արձանագրել, քանի որ դիմումատուների՝ երեխաների նկատմամբ պետական խնամք սահմանելու մասին որոշմամբ երեխաները տեղավորվել էին դիմումատուների

բնակության վայրից բավականին հեռու ապրող տարբեր խնամատար ընտանիքներում[1]: Կարծում ենք, որ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը դրսևորվում է նաև ծնողների՝ խնամակալության կամ խնամատար ընտանիքում գտնվող իրենց երեխայի հետ վերամիավորման իրական հնարավորություն ունենալու մեջ: Բացի այդ, երեխայի ծնողների ու այլ ազգականների հետ շփումը խնամակալի, խնամատար ծնողի պարտականությունների կատարման նկատմամբ ինչոր առումով վերահսկող դեր կարող է կատարել, քանի որ երեխայի հետ անմիջական շփման դեպքում միայն հնարավոր կլինի տեսնել խնամքի և դաստիարակության բացթողումները, երեխայի շահերին հակասող գործողությունները՝ այդպիսով հնարավորություն ունենալով դրանք կանխելուն ուղղված քայլեր ձեռնարկել՝ դիմելով իրավասու մարմիններին: Ուստի ծնողների և այլ ազգականների հետ շփման իրավունքի իրացման ապահովմանը նպաստելու նպատակով առաջարկում ենք Ընտանեկան օրենսգրքի 135-րդ հոդվածը լրացնել 4-րդ կետով, որի համաձայն՝. ***«Խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս, այդ թվում խնամատար ծնող ընտրելիս սահմանված պահանջներին բավարարող մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվության իրավունք տրվում է այն անձին, ով երեխայի ծնողներից (այլ ազգականներից) այնպիսի հեռավորությամբ է ապրում, որը նրանց հետ շփվելու խոչընդոտներ չի առաջացնի, եթե դա չի հակասում երեխայի շահերին»:***

ПРАВО НА ОБЩЕНИЕ С РОДИТЕЛЯМИ И ДРУГИМИ РОДСТВЕННИКАМИ РЕБЕНКА, НАХОДЯЩЕГОСЯ ПОД ОПЕКОЙ, ПОПЕЧИТЕЛЬСТВОМ И В ПРИЕМНОЙ СЕМЬЕ

Рубина Петросян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

Хотя законодатель в статье 111 Семейного кодекса РА подчеркнул особую важность и значимость права на общение с родителями и другими родственниками, в случае детей, лишенных родительского попечения и заботы, в вышеуказанной статье отсутствуют какие-либо положения по применению возможных санкций по отношению к опекуну, приемному родителю в случае несоблюдения или ненадлежащего исполнения обязанностей. Следовательно, руководствуясь идеей воссоединения ребенка с биологической семьей, предлагаем дополнить Семейный кодекс новой статьей под названием «Права и обязанности опекуна или попечителя», в которой четко будут указаны обязательства о непричинении препятствий общению с ребенком, за исключением случаев, когда такое общение противоречит интересам ребенка.

[1]/395/ European Court of Human Rights, Case of **Olsson v. Sweden**, 24/ 03/ 1988/ App. no. № 10465/83// https://hudoc.echr.coe.int/eng (վերջին մուտք 07.05.2018 թ.): Սակայն հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը, արձանագրելով երեխաների՝ ծնողների տանից ոչ հեռու խնամատար ընտանիքներում տեղավորման ցանկալի լինելը, դիմումատուների դրսևորած վարքագծի պայմաններում (երեխաներին տանել թաքցնել և այլն) նման որոշումը միանգամայն արդարացի է համարել:

THE RIGHT OF THE CHILD IN CARE, GUARDIANSHIP, AND FOSTER HOME TO MAINTAIN CONTACT WITH PARENTS AND OTHER RELATIVES

Rubina Petrosyan
PhD Student at the YSU Chair of Civil Law

Although Article 111 of the Family Code of the RA legislation has pointed out the particular importance and significance of the right of children deprived of parental care to maintain contact with parents and other relatives, it does not contain any provisions of possible sanctions in case of non-compliance or improper fulfillment of the responsibilities of the guardian or foster parent.

Therefore, guided by the idea of reuniting the child with his biological family set forth in the Family Code, and taking into account the significance of this right, we propose to supplement the Family Code with a new Article entitled “Rights and Obligations of a Guardian or Custodian”, where the obligation not to preclude the contact of the child with a guardian, foster parent, parent or other relative shall be strictly adhered to, except for the cases when such communication contradicts the interests of the child.

Բանալի բառեր – *առանց ծնողական խնամքի մնացած երեխա, ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունք, խնամակալություն, հոգաբարձություն, խնամատար ընտանիք, խնամարկյալ, հոգեզավակ, երեխայի լավագույն շահ*

Ключевые слова: *ребенок, оставшийся без родительского попечения, право на общение с родителями и другими родственниками, опекунство, попечительство, приемная семья, опекаемый, приемный ребенок, наилучшие интересы ребенка*

Key words: *a child without parental care, guardianship, custody, foster family, the right to communicate with parents and other relatives, fosterer, guardian, the best interest of the child*